ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2020 թվականի օգոստոս ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 34,960.4 մլն դրամ՝ պլանավորված 34,000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2,8 տոկոսով կամ 960,4 մլն դրամով:

Օգոստոս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4,471.8 մլն դրամ՝ պլանավորված 4,000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 11,8 տոկոսով կամ 471,8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 148 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 10 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 14 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 12,6 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 90 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 66-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկի ճշտության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 2-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 2-ը՝ ԱՀ կառավարության 2020թ. մայիսի 18-ի N 372-Ա որոշմամբ հաստատված շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերի և 8 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 9 հայցադիմում՝ 120,0 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում կայացվել է 5 վճիռ՝ 9,752.0 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից 1-ը՝ 9,692.0 հազ. դրամ գումարով,

սնանկության հայցերի և 4-ը՝ 60.0 հազ. դրամ գումարով, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցերի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 137 վարչական գործով սահմանվել է 2,740.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 10,196 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 9,956:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 52 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում օգոստոս ամսում կատարվել է վերադարձ 83 վարձու աշխատողի՝ 12,0 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 40 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամանով փոփոխություններ են կատարվել օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման և դրանց արդյունքում հայտնաբերված իրավախախտումների համար հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման ընթացակարգում:

Հիմք ընդունելով ԱՀ Նախագահի 2020-2025թթ. ծրագիրը՝ հաշվետու ամսում մշակվել է Արցախի Հանրապետության հարկային համակարգի 2020-2025 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը:

Օգոստոսի 14-ին պետական եկամուտների կոմիտեի նախագահի գլխավորությամբ կայացել է աշխատանքային խորհրդակցություն ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվել են 2020 թվականի 1-ին կիսամյակում պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների պլան-առաջադրանքների կատարողականը, ԱՀ տարածք ներմուծված և արտահանված ապրանքանյութական արժեքների հաշվառման, վերահսկողության և մի շարք այլ ուղղություններով կատարված աշխատանքները, նախանշվել առաջիկա անելիքները:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում՝ երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Օգոստոս ամսում կոմիտեում ամփոփվել են կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների հերթական փուլի արդյունքները: Աջակցությունից օգտվելու նպատակով պետական եկամուտների կոմիտե դիմումներ են ներկայացրել 206 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 178-ը բավարարել են որոշման պահանջներին և սահմանված կարգով գանձապետարան են ներկայացվել 6,736.9 հազ. դրամ գումարի չափով վճարման հանձնարարականներ՝ վերջիններիս փոխանցելու նպատակով:

ԱՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 17-ի N 347-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում մեկնարկել է զբոսաշրջության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին աջակցության տրամադրման միջոցառումը, որի շրջանակում ընդունվել են միանվագ դրամաշնորհ ստանալու վերաբերյալ 42 դիմումներ, որոնք գտնվում են ուսումնասիրության ընթացքում:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Կարևորելով հարկ վճարողների և շահագրգիռ այլ անձանց ակտիվ մասնակցությունը օրինաստեղծ աշխատանքների իրականացմանը՝ հաշվետու ամսում կազմակերպվել է ինտերակտիվ հարցում՝ հնարավորություն ընձեռելով հարկային մարմնի կայքէջի այցելուներին ներկայացնելու առաջարկություններ՝ հարկային օրենսդրության բարելավման վերաբերյալ:

Արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության վարչությունում պայմանագրային հիմունքներով աշխատելու համար կազմակերպվել է հարցազրույց, որի արդյունքում 3 դիմորդներ հրավիրվել են աշխատանքի:

Օգոստոս ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 345, ելքագրվել՝ 273 նամակ-գրություն, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 11 գրություն, որից 3-ը՝ էլեկտրոնային եղանակով: